ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ Հ. 17 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Սույն հաշվետվությունը ներկայացնում է 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական հաստատությունում իրականացված աշխատանքների ամբողջական պատկերն՝ ըստ ամիսների: Դրանք արտացոլում են կրթական գործընթացի կազմակերպման, կառավարման և վերահսկման համակարգված աշխատանքները՝ միտված ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Օգոստոս ամսվա ընթացքում ուսումնական հաստատությունում իրականացվել են ուսումնական տարվա կազմակերպման և արդյունավետ մեկնարկի ապահովմանն ուղղված մի շարք աշխատանքներ:

Կազմակերպվել և իրականացվել է սովորողների ընդունելությունը:

Հաստատվել են պարտադիր ուսումնական խմբակների և ուսումնական նախագծերի տարեկան պլանները, կատարվել է դասաբաշխում, կազմվել և հաստատվել է դասացուցակը: Հրավիրվել և անցկացվել են առարկայական մասնախմբերի, ինչպես նաև դաստիարակների և մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի նիստեր:

2025-2026 ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ, հաստատվել է մանկավարժական խորհրդի կազմը: Մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել են ամբողջ ուսումնական տարվա անելիքները՝ առանձնահատուկ շեշտադրմամբ սեպտեմբեր ամսվա գործողությունների վրա: Ներկայացվել է նաև նոր ընդունված աշխատակիցների ցանկը՝ նշելով նրանց պաշտոններն ու պարտականությունները: Մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել և քննարկվել է դասարանների կազմավորման նախագիծը: Ներկայացվել են ուսումնական պլանի դպրոցական և անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակների տնօրինման վերաբերյալ առարկայական մեթոդական միավորումների առաջարկությունները, իրականացվել է դրանց վերջնական բաշխումը:

Քննարկվել և հաստատվել են առարկայական ծրագրերի թեմատիկ պլանները, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, մանկավարժների և տնօրենի տեղակալի ուսումնադաստիարակչական աշխատանքի տարեկան պլանները. ուսումնադաստիարակչական աշխատանքի տարեկան պլանը տեղադրվել է Պաշարների շտեմարանում (https://lib.armedu.am/article/30325):

Կազմակերպվել և իրականացվել է ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթ:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ուսումնական հաստատությունում իրականացվել են ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպմանն ու արդյունավետ իրականացմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ:

Իրականացվել է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում, ուսումնասիրվել և դիտարկվել են սովորողների մոտ ձևավորված գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները: Կազմակերպվել է սովորողների վարքի և ուսումնական պարապմունքների դիտարկում ուսուցիչների և ՄՀ աջակցություն տրամադրող մասնագետների կողմից:

Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում կատարվել են սահմանված բոլոր աշխատանքները՝ ապահովելով տվյալների ամբողջական և ժամանակին մուտքագրումը: Կազմվել և հաստատվել է առաջին կիսամյակի դասացուցակը, որը տեղադրվել է էլեկտրոնային մատյանում: Իրականացվել է էլեկտրոնային մատյանների ստուգում և վերահսկում:

Կազմակերպվել է կրթության հաջորդ աստիճան փոխադրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ինչպես նաև առաջին և ընթացիկ դասարաններ ընդունված սովորողների (ըստ անհրաժեշտության) գնահատման գործընթացը: Մշակվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր սովորողների անհատական ուսումնական պլանները:

Ընդունվել և քննարկվել են ծնողների դիմումները երթերի գրաֆիկների կազմման և երկարօրյա խմբերի ձևավորման նպատակով:

Կազմվել և հաստատվել են մանկավարժների հերթապահության ցուցակները, այդ թվում՝ կերակրման գործընթացին աջակցելու նպատակով: Միաժամանակ կազմվել և հաստատման են ներկայացվել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող յուրաքանչյուր մասնագետի անհատական աշխատանքային գրաֆիկները: Հրավիրվել և անցկացվել են առարկայական մասնախմբերի, ինչպես նաև դաստիարակների և մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի նիստեր, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստ:

Հրավիրվել է ծնողական համադպրոցական ժողով, որի ընթացքում ընտրվել են դասարանական և դպրոցի ծնողական խորհուրդները:

«Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակներում իրականացվել են սովորողների մոտ ճանապարհային երթևեկության և դրա անվտանգության վերաբերյալ պարզ և կիրառելի գիտելիքների ձևավորմանը միտված աշխատանքներ, որոնք ամփոփվել են բաց դասերով (միջոցառման մասին հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/p3360hy/):

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ուսումնական հաստատությունում իրականացվել են ուսումնական գործընթացի որակի բարձրացմանն ու արդյունավետ կառավարմանն ուղղված հետևողական աշխատանքներ:

Կազմակերպվել և իրականացվել է «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով սեմինար, որի ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսումնառության որակի բարձրացման և ժամանակակից մեթոդների կիրառման հարցերը:

Համակարգված ձևով իրականացվել են մանկավարժահոգեբանական աջակցության թիմի աշխատանքները (անհատական և խմբային պարապմունքներ սովորողների հետ)՝ նպատակ ունենալով ապահովել սովորողների կրթական, հոգեբանական և սոցիալական աջակցությունը:

Կազմակերպվել են անհատական ուսումնական պլանների (ԱՈՒՊ) քննարկումներ, իրականացվել է առաջին շրջափուլի երկամսյա աշխատանքների ամփոփում (ձև 4):

Քննարկվել են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքը և սովորողների ընթացիկ ուսումնական առաջադիմության արդյունքները՝ վերլուծելով ձեռքբերումներն ու բարելավման ենթակա ուղղությունները:

Իրականացվել է ուսուցիչների աշխատանքի վերահսկողություն՝ առարկայական մասնախմբերի ղեկավարների կողմից կազմակերպված դասալսումների և դիտարկումների միջոցով, որոնք միտված են եղել ուսումնական առարկաների դասավանդման որակի և սովորողների ուսումնական առաջադիմության դինամիկայի արձանագրմանը, առկա խնդիրների

վերհանմանը և զարգացման ուղղությունների նախանշմանը: Դասալսումների արդյունքները քննարկվել, տրամադրվել է հետադարձ կապ, իսկ սկսնակ մանկավարժների աշխատանքի նկատմամբ ցուցաբերվել է առանձնակի ուշադրություն՝ ապահովելով նրանց մասնագիտական աջակցություն և անհրաժեշտ խորհրդատվություն:

Իրականացվել է էլեկտրոնային մատյանների գրանցումների ստուգում՝ ուսումնական գործընթացում սովորողների գնահատման գործընթացի պատշաճ կազմակերպումն ապահովելու նպատակով:

Հրավիրվել և անցկացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստեր, ծնողական, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստը:

Իրականացվել է «Էրեբունի-Երևան» տոնի առիթով պլանավորված միջոցառումը (միջոցառման մասին հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/pn2622hy/):

Նոյեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվել են քննարկումներ՝ նվիրված ուսումնադաստիարակչական գործընթացի ընթացքին, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքներին, առարկայական թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման ընթացքում ի հայտ եկած խնդիրներին: Առկա թերությունների վերացման նպատակով նախանշվել և պլանավորվել են համապատասխան գործողություններ:

Տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից կազմակերպված դասալսումների միջոցով իրականացվել է ուսուցիչների աշխատանքի վերահսկողություն՝ հետադարձ կապի տրամադրմամբ և ուսուցման որակի բարելավմանն ուղղված առաջարկություններով: Մշտադիտարկվել է նաև մանկավարժահոգեբանական աջակցության թիմի աշխատանքների որակն ու արդյունավետությունը՝ ծառայությունների նպատակային և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով:

Ապահովվել է սովորողների հաճախումների մշտադիտարկումը և հաշվառման վերահսկումը՝ ուսումնական գործընթացի կանոնավորության պահպանման նպատակով:

Կազմակերպվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրավունքների իրազեկման օրեր՝ պաստառների պատրաստման և բաց դաս (https://yerevan17s.schoolsite.am/pn2644hy/),
- «Ոսկե աշուն» (հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/pn2644hy/):

Նույն ամսվա ընթացքում ԿԱԴԱՀ-ի և հոգեբանի կողմից իրականացվել է «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» թեմայով 4 վերապատրաստման դասընթաց՝ ծնողական համայնքի (հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/pn2506hy/), մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների համար (հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/pn2559hy/) կրթական միջավայրում անվտանգության, պատասխանատվության և համագործակցության մշակույթի ձևավորման ու ամրապնդման նպատակով: Ուսուցիչները և մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետները վերապատրաստվել են այլընտրանքային հաղորդակցման տեխնոլոգիաների վերաբերյալ դասընթացի (հրապարակման հղում՝ https://yerevan17s.schoolsite.am/pn2738hy/):

Դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել է սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում և քննարկում, բացակաների հաշվառում՝ խնդիրների վերհանման և լուծումների առաջադրման նպատակով: Իրականացվել են անհատական ուսումնական պլանների քննարկումներ և կատարվել է երկամսյա աշխատանքների ամփոփում՝

երկրորդ շրջափուլի համար (ձև 4), ապահովելով սովորողների կրթական կարիքներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպումը:

Հրավիրվել է առարկայական մեթոդական միավորման նիստ՝ հաստատված օրակարգով, որի ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման արդյունավետության և առաջադիմության բարելավմանն ուղղված հարցեր:

Կազմակերպվել է ծնողական համայնքի հանդիպում՝ փոխօգնության և համագործակցության ձևաչափով, որի ընթացքում քննարկվել են առկա խնդիրները, առաջարկները և կրթական գործընթացի բարելավման հնարավոր ուղիները:

Հրավիրվել և անցկացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստեր՝ որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման արդյունավետության և առաջադիմության բարելավմանն ուղղված հարցեր: Կիսամյակի ավարտին կայացել է նաև մանկավարժական խորհրդի նիստը:

Կազմակերպվել և իրականացվել է 2 իրազեկող միջոցառում, 5 ամանորյա միջոցառում և դասարանների ամանօրյա ձևավորման մրցույթ, որոնք նպաստել են կրթական միջավայրում դրական հուզական ֆոնի ձևավորմանը, սովորողների և մանկավարժների ակտիվ մասնակցությանը և համագործակցության ամրապնդմանը: Միջոցառումների վերաբերյալ հրապարակումներ են արվել, դպրոցի պաշտոնական կայքում.

- Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառում՝ https://yerevan17s.schoolsite.am/p3093hy/)
- Առողջ սովորությունների ազդարարման և ամրապնդման շաբաթվա ամփոփիչ միջոցառում՝ https://yerevan17s.schoolsite.am/p3149hy/
- Ամանորյա մեկնարկային միջոցառում՝ https://yerevan17s.schoolsite.am/p3185hy/
- Փոքրիկ դերեր՝ մեծ տոնական տրամադրություն. «Ամանորյա միջոցառումներ» շարքի երկրորդ օր https://yerevan17s.schoolsite.am/p3232hy/
- Մաթեմատիկական գաղափարներն ամանորյա բեմում. «Ամանորյա միջոցառումներ» շարքի երրորդ օր https://yerevan17s.schoolsite.am/p3259hy/
- «Կախարդական ժամացույցն ու փրկարար հերոսները». «Ամանորյա միջոցառումներ» շարքի չորրորդ օր՝ https://yerevan17s.schoolsite.am/p3318hy/
- «Փնթփնթան թագավորի գաղտնիքը». «Ամանորյա միջոցառումներ» շարքի ամփոփում՝ https://yerevan17s.schoolsite.am/p3329hy/

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ համագործակցության շրջանակներում դպրոց են հրավիրվել գրադարանի աշխատակիցներ՝ սովորողների համար հեքիաթ-օպերա ներկայացնելու համար (https://yerevan17s.schoolsite.am/p3171hy/):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները արտացոլում են ուսումնական գործընթացի շարունակական զարգացման և կատարելագործման ուղղությամբ տարվող հետևողական գործունեությունը: Դրանք նպաստել են կրթական միջավայրի արդյունավետ կազմակերպմանը, մանկավարժական աշխատանքի որակի բարձրացմանը և սովորողների կրթական ու սոցիալ-հուզական կարիքների առավել ամբողջական ապահովմանը:

Հունվար ամսվա ընթացքում իրականացվել են երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման և արդյունավետ մեկնարկի ապահովմանն ուղղված աշխատանքներ: Ամսվա սկզբում կազմակերպվել են նախապատրաստական աշխատանքներ՝ հաստատվել է ուսումնական պլանը և դասացուցակը, ապահովվել է դրանց գործնական

կիրառումը, իրականացվել է ԴԿՏՀ համակարգում անհրաժեշտ տվյալների ամբողջական մուտքագրումը:

Մեկնարկել է տարրական դասարանների սովորողների բնութագրման ձևաչափով միջոցով ուսումնական առաջադիմության գնահատման գործընթացի վերլուծությունը, որի արդյունքների ամփոփման ժամկետները երկարաձգվել են՝ առավել ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Մասնախմբերին հանձնարարվել է ամփոփել գնահատման արդյունքները և ներկայացնել ընդհանրացված հաշվետվություն:

Քննարկվել և հաստատվել են 7–9-րդ դասարաններում իրականացվելիք ուսումնական նախագծերի թեմաներն ու պլանները՝ ապահովելով դրանց համակարգված իրականացումը:

Շարունակվել է սովորողների հաճախումների հաշվառման և ներդպրոցական վերահսկողության գործընթացը՝ ներառյալ մատենավարության և ուսումնական նախագծերի կազմակերպման ստուգումը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են ինչպես ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված Հայոց բանակի կազմավորման օրվան նվիրված միջոցառում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p1284/):

Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը:

Փետրվար ամսվա ընթացքում ուսումնական հաստատությունում նախատեսված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, սովորողների առաջադիմության վերլուծության և համագործակցային աշխատանքի ընդլայնման ապահովմանը:

Կազմվել և մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել է բնութագրման միջոցով ուսումնական առաջադիմության գնահատման վերլուծության վերաբերյալ զեկույցը՝ ապահովելով տվյալների ամփոփում և գործընթացի արդյունավետության գնահատում:

ԱՈՒՊ-ներով իրականացվող աշխատանքների շրջանակում սահմանված ժամանակացույցի համապատասխան իրականացվել են երկամսյա քննարկումներ ծնողների հետ՝ առկա ձևաչափով հանդիպումների միջոցով: Գործընթացին մասնակցել են մանկավարժահոգեբանական աջակցության թիմի մասնագետները և գրեթե բոլոր ուսուցիչները՝ ապահովելով համագործակցային և բազմակողմանի քննարկում սովորողների առաջընթացի վերաբերյալ:

Ամսվա ընթացքում իրականացվել են «Թումանյանական օրերին» նվիրված միջոցառումների շարք, որոնք նպաստել են սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, գրական հետաքրքրությունների ձևավորմանը և կրթական միջավայրում ակտիվ մասնակցության ապահովմանը.

- Թումանյանական շաբաթ. Հերոսների մարմնավորում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p1269/),
- Թումանյանական շաբաթ. Հեքիաթների ընթերցում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p1185/):

Բացի այդ, կազմակերպվել է Մայրենիի օրվան նվիրված համադպրոցական միջոցառում, որը միտված է եղել լեզվական կարողությունների զարգացմանն ու ազգային արժեքների կարևորության ընդգծմանը:

Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի

բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը, մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերը:

Ընդհանուր առմամբ, փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական գործընթացի համակարգված կազմակերպմանը, ծնող-դպրոց համագործակցության ամրապնդմանը և սովորողների կրթական կարիքների առավել ամբողջական գնահատմանը:

Մարտ ամսվա ընթացքում շարունակվել է ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման աշխատանքը՝ ապահովելով դասավանդման կայուն ընթացքը և սովորողների ակտիվ ներգրավվածությունը: Իրականացվել են դասալսումներ և դիտարկումներ տնօրենի և ԿԱԴԱՀ-ի, ով այդ պահին իրականացնում էր տնօրենի տեղակալի պարտականությունները վերջինիս երկարաժամկետ արձակուրդում գտնվելու պատճառով, ինչպես նաև առարկայական մասնախմբերի ղեկավարների կողմից՝ միտված դասավանդման որակի բարձրացմանը, ուսուցման մեթոդների արդյունավետության գնահատմանը և սովորողների ուսումնառության արդյունքների վերլուծությանը: Դասալսումների արդյունքները քննարկվել են, մանկավարժներին տրամադրվել է համապատասխան հետադարձ կապ՝ շեշտադրելով ինչպես ձեռքբերումները, այնպես էլ բարելավման ենթակա ուղղությունները:

Մասնախմբերի ղեկավարների կողմից դասալսումների արդյունքում իրականացված վերլուծության արդյունքում վերջիններս արձանագրել են, որ դիտարկված դասարաններում ուսուցիչները հիմնականում ներկայացել են դասի պլաններով, կիրառել են ակտիվ և համագործակցային մեթոդներ՝ ապահովելով սովորողների ներգրավվածությունը: Դասերի ընթացքում օգտագործվել են ցուցադրական նյութեր և իրականացվել են խելամիտ հարմարեցումներ՝ համապատասխանեցնելով ուսուցման գործընթացը սովորողների կարիքներին: Միաժամանակ, այն դասարաններում, որտեղ դիտարկման նպատակն էր գնահատել դասի բովանդակության համապատասխանությունը անհատական ուսումնական պլաններով սահմանված նպատակներին, արձանագրվել է, որ դասերի բովանդակությունը հիմնականում համընկնում է այդ նպատակներին: Ուսուցիչները շեշտադրել են ոչ միայն գիտելիքի փոխանցումը, այլև կարողունակությունների ձևավորումը՝ կիրառելով տարբերակված ուսուցման մոտեցումներ և փորձելով ապահովել ուսումնական նյութի հասանելիությունը բոլոր սովորողների համար:

Մարտ ամսից գործարկվել է նաև դպրոցի պաշտոնական նոր կայքը, որը միտված է ապահովելու իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը: Կայքում պարբերաբար տեղադրվում են ուսումնական հաստատությունում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տարբեր միջոցառումների, ծրագրերի և նախաձեռնությունների մասին հրապարակումներ՝ նպաստելով կրթական գործընթացի թափանցիկության բարձրացմանը և դպրոցի գործունեության բաց ու հասանելի ներկայացմանը:

ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված միջոցառումների մի մասը մարտ ամսվա ընթացքում չեն իրականացվել՝ պայմանավորված սովորողների և մանկավարժների բացակայություններով, և տեղափոխվել է ապրիլ ամիս: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել է.

- Սովորողների 2 տարբեր խմբերի այցելություն Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոն, որի շրջանակում իրականացվել է դաստիարակչական և մշակութային զարգացմանը նպաստող աշխատանքներ (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13009/):

- Բաց դաս «Հացը» թեմայով 2-րդ «բ» դասարանում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p1732/):
- «Մասնագիտական այրման կանխարգելում և հուզական ռեսուրսների վերականգնում» թեմայով դասընթաց ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն տրամադրող մասնագետների համար (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p1770/):

Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը:

Ապրիլ ամսվա ընթացքում շարունակվել են դեռևս մարտ ամսին մեկնարկած դասալսումները և դիտարկումները տնօրենի և ԿԱԴԱՀ-ի կողմից: Աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվել է ընդհանրական վերլուծություն, որ ներկայացվել է ապրիլի 30-ի մանկավարժական խորհրդի նիստում: Դասալսումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսումնական գործընթացում առկա են ինչպես դրական զարգացումներ, այնպես էլ մեթոդական և կազմակերպչական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք անմիջական ազդեցություն ունեն դասի արդյունավետության վրա:

Դրական տեսանկյունից արձանագրվել է, որ ուսուցիչները հիմնականում ցուցաբերում են սովորողների առանձնահատկություններին զգայուն և անհատական մոտեցում, կարողանում են ժամանակին արձագանքել սովորողների հոգնածության և վարքային լարվածության դրսևորումներին՝ կիրառելով կարգավորման և հուզական կայունացման համապատասխան մեխանիզմներ: Արձանագրբել են նաև արդյունավետ համագործակցության և համադրված աշխատանքի օրինակներ ուսուցիչ-դաստիարակ համատեղ աշխատանքում, ինչպես նաև տեսողական և առարկայական միջոցների կիրառման որոշակի արդյունավետ փորձեր:

Միևնույն ժամանակ, վերլուծության արդյունքում բացահայտվել են համակարգային բնույթի խնդիրներ՝ կապված դասի պլանավորման, նպատակների և վերջնարդյունքների հստակ ձևակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման, ուսուցման մեթոդների բազմազանության և սովորողների շարունակական ներգրավվածության ապահովման հետ: Դիտարկվել է նաև, որ որոշ դեպքերում ուսումնական գործընթացը բավարար չափով չի բխել անհատական ուսուցման պլաններով (ԱՈՒՊ) սահմանված նպատակներից, իսկ խմբային աշխատանքի և տարբերակված ուսուցման հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվել:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ ուսումնական գործընթացն ունի զարգացման ներուժ, սակայն դրա լիարժեք արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է կատարելագործել դասի պլանավորման որակը, հստակեցնել նպատակների և վերջնարդյունքների ձևակերպումը, ուժեղացնել ժամանակի կառավարման հմտությունները, ինչպես նաև ապահովել ուսուցման մեթոդների ավելի նպատակային և համակարգված կիրառություն՝ ուղղված սովորողների ակտիվ ներգրավվածության և ուսուցման արդյունքների բարձրացմանը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ տվյալների և մասնախմբերի ղեկավարների կողմից մարտ ամսին իրականացված դասալսումների արդյունքներով ներկայացված վերլուծությունների համադրման արդյունքում արձանագրվել է, որ որոշ դեպքերում մասնախմբերի ղեկավարների և տնօրինության կողմից կատարված եզրահանգումները և գնահատականները չեն համընկնում: Նշվածը վկայում է գնահատման չափանիշների, մոտեցումների և վերլուծական գործիքների առավել միասնականացման ու համադրելիության ապահովման անհրաժեշտության մասին, ինչի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ գործողություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են ինչպես ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված, այնպես էլ մանկավարժների նախաձեռնությամբ այլ միջոցառումներ՝

Ցերեկույթներ՝

1) Զատկի տոնին նվիրված ցերեկույթ՝ Սուրբ Հարության գաղափարի և զատկական ավանդույթներ ներկայացմաբ (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p12661/)
2) Երաժշտական ընթերցում դպրոցում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13054/)
3) Հուշ-ցերեկույթ՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14146/),

Բաց դասեր 4 հատ՝

1) «Ես իմ երկրի քաղաքացին եմ և ճանաչում եմ մեր երկրի խորհրդանիշերը» թեմայով բաց դաս (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14157/),
2) Ապահով և անվտանգ կրթության տարի խորագրի շրջանակներում՝ Բնական աղետներ թեմայով բաց դաս (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13747/),
3) «Գարնան զարթոնք» խորագրով բաց դաս (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14121/),
4) «Գարունն ու նկարչի վերջին գույնը» խորագրով բաց դաս (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13721/),

Էքսկուրսիաներ 5 հատ՝

1) Կենդանաբանական այգի՝ 2 այց (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14563/),
2) «Փայտե ձի» հիպոթերապիայի կենտրոն (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14587/),
3) Հաղթանակի զբոսայգի (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14563/),
4) Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14392/),

Այլ միջոցառումներ

1) «Գարնան զարթոնք» խորագրով ցուցահանդես (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13873/),
2) Մայրության և գեղեցկության տոնի շրջանակում տոնական բացիկների պատրաստում սովորողների կողմից (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p13798/),

Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը, մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերը:

Մայիս ամսվա ընթացքում ուսումնական հաստատությունում իրականացվել են ուսումնական գործընթացի վերահսկման, ամփոփման և կազմակերպական աշխատանքների համակարգված միջոցառումներ՝ ուղղված ուսումնական տարվա ամփոփման արդյունավետ իրականացմանը:

Ամսվա ընթացքում իրականացվել է մատենավարության ստուգում, ուսումնասիրվել են սովորողների անհատական թղթապանակների բովանդակությունը, ինչպես նաև էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումները և մանկավարժական աշխատողների կողմից այլ փաստաթղթերի վարման գործընթացը: Արդյունքում արձանագրվել են որոշակի բացթողումներ, որոնց վերացման նպատակով համապատասխան աշխատակիցներին տրվել են հստակ ցուցումներ և հետադարձ կապ:

Իններորդ դասարանում պետական ավարտական քննությունների կազմակերպման շրջանակում աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ դեռևս ապրիլ ամսին բոլոր սովորողների ծնողները (օրինական ներկայացուցիչները) ներկայացրել են դիմումներ՝ երեխաներին ինտելեկտուալ և մտավոր խնդիրներով պայմանավորված պետական ավարտական քննություններից ազատելու վերաբերյալ:

Իրականացվել է սովորողների հաճախումների տարեկան ամփոփում: Բացահայտվել է 200 ժամից ավելի բացակայություն ունեցող 1 սովորող, որի համար, սահմանված կարգով կազմակերպվել է լրացուցիչ քննություններ բոլոր առարկաներից, սակայն վերջինս չի ներկայացել քննությանը:

Ամսվա ընթացքում իրականացվել են սովորողների անհատական ուսումնական պլանների (ԱՈՒՊ) ընթացիկ՝ երկամսյա քննարկումներ: Քննարկումների արդյունքում կազմվել և լրացվել են համապատասխան արձանագրությունները: Ծնողների ներգրավվածությունը առկա ձևաչափով ապահովել չի հաջողվել, այդ պատճառով սովորողների առաջընթացի և իրականացվող աշխատանքների վերաբերյալ հետադարձ կապը ծնողներին տրամադրվել է հեռավար ձևաչափով՝ հեռախոսազրույցների միջոցով:

Իններորդ դասարանի համար կազմակերպվել է ավարտական «Վերջին դաս» միջոցառումը, որն անցկացվել է հանդիսավոր մթնոլորտում՝ ապահովելով սովորողների, ուսուցիչների և դասավանդող անձնակազմի ակտիվ մասնակցությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույններ» մրցույթի շրջանակում մայիս ամսվա «Լավագույն հոգեբան» անվանակարգին ներկայացվել է հոգեբան Լիլիթ Սեյրանյանի թեկնածությունը:

Մայիս ամսվա ընթացքում մշակվել և ներդրվել են հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափեր՝ դասղեկների, ուսուցիչների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, դաստիարակների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների համար: Նոր ձևաչափերի կիրառումը նպաստել է իրականացվող աշխատանքների վերաբերյալ առավել հստակ, ամբողջական և համադրելի տեղեկատվության հավաքագրմանը, հաշվետվականության որակի բարձրացմանը, ինչպես նաև կառավարման և վերլուծական գործընթացների արդյունավետության բարելավմանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են ինչպես ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված, այնպես էլ մանկավարժների նախաձեռնությամբ այլ միջոցառումներ՝

Ցերեկույթներ՝ 4

1) «Անվտանգ ամառային արձակուրդներ» խորագրով միջոցառում հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15280/),
2) Սպորտը՝ որպես համագործակցության և վստահության միջավայր (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14858/),
3) Համադպրոցական պարային ֆլեշմոբ՝ ուսումնական տարվա ամփոփման շրջանակու (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15422/),
4) «Լապտերների փողոց 17». Վերջին դասին նվիրված ցերեկույթ (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15450/),

Բաց դասեր հատ՝ 2

1) «Մաթեմատիկայի գիտելիքների ծառ» (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15502/),

2) Առաջին դասարանների համատեղ ամփոփիչ բաց դաս (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15395/),

Էքսկուրսիաներ հատ՝ 2

1) «Տարվա եղանակների հեքիաթը». Պլանետարիում (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14652/),
2) Այց պաղպաղակի գործարան (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15357/),

Այլ միջոցառումներ՝ 1

1) Դասը՝ իրական կյանքում. գործնական այց դեպի խանութ (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p14905/),

Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը: Բացի այդ հրավիրվել է նաև մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ, որի ընթացքում քննարկվել են 200 և ավելի ժամ բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննությունների կազմակերպման և նախապատրաստական աշխատանքների հետ կապված հարցերը:

Ընդհանուր առմամբ, մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները ուղղված են եղել ուսումնական տարվա ավարտական փուլերի կազմակերպված ամփոփմանը, վարչական և մանկավարժական գործընթացների վերահսկմանը, ինչպես նաև սովորողների առաջընթացի և փաստաթղթային վարման որակի ապահովմանը:

Հունիսին իրականացվել է բոլոր ուսումնական առարկաների թեմատիկ պլանների վերանայում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դասի նպատակների և վերջնարդյունքների ձևակերպմանը, քանի որ վերլուծության արդյունքում արձանագրվել էր, որ նշված բաղադրիչները մի շարք դեպքերում ձևակերպված են եղել ոչ բավարար հստակությամբ կամ ամբողջականությամբ, ինչը դժվարացրել է դասի արդյունքների գնահատումն ու պլանավորված գործունեության արդյունավետության վերլուծությունը:

Ներդպրոցական վերահսկողության շրջանակներում իրականացվել է դասղեկների աշխատանքների արդյունավետության մշտադիտարկում՝ հիմք ընդունելով նրանց կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունները և մշակված տարեկան պլանները: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ մի շարք դեպքերում տարեկան պլաններով նախատեսված աշխատանքներն ու հաշվետվություններում ներկայացված գործունեությունը լիարժեք համադրելի չեն, իսկ առանձին հաշվետվություններում ներառված են այնպիսի միջոցառումներ և աշխատանքներ, որոնք իրականացվել են դպրոցական ընդհանուր գործունեության շրջանակում և չեն հանդիսացել տվյալ դասղեկի անմիջական նախաձեռնությունը կամ կազմակերպած աշխատանքը:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդիրը հիմնականում պայմանավորված է ոչ թե իրականացված աշխատանքների ոչ ճիշտ ներկայացմամբ, այլ դասղեկների կողմից տեղեկատվության դասակարգման, համակարգման և հաշվետվողականության կառուցվածքային ներկայացման դժվարություններով: Արդյունքները վկայում են, որ անհրաժեշտություն կա մշակելու դասղեկների գործունեության տարեկան պլանավորման և հաշվետվությունների միասնական ձևաչափեր, որոնք հնարավորություն կտան հստակ առանձնացնել նախատեսվող աշխատանքների ուղղությունները, ամրագրել

իրականացվելիք միջոցառումները և ուսումնական տարվա ավարտին ներկայացնել առավել համակարգված, համադրելի և բովանդակային հաշվետվություններ:

Հունիս ամսվա ընթացքում ամփոփվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույններ» մրցույթի արդյունքները, որոնց շրջանակում դպրոցի հոգեբան Լիլիթ Սեյրանյանը ճանաչվել է «Մայիս ամսվա լավագույն հոգեբան» անվանակարգի հաղթող:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել է «Մասնագիտական այրման կանխարգելում և հուզական ռեսուրսների վերականգնում» թեմայով դասընթաց դաստիարակների համար (հրապարակման հղում՝ https://mssrc.am/p15591/): Իրականացվել են առարկայական մասնախմբերի, դաստիարակների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետների մասնախմբերի բոլոր պլանավորված նիստերը, տնօրենի կողմից հրավիրված ամենամսյա խորհրդակցությունը:

Հունիս ամիսը հանդիսացել է ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփման և վերլուծության շրջան: Ամսվա ընթացքում կազմվել և ներկայացվել են առարկայական մեթոդական միավորումների, դասղեկների, դաստիարակների, ՄՀ աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների, տնօրենի տեղակալի, ԿԱԴԱՀ-ի և ՈՒԴԱՏՊ-ի տարեկան հաշվետվություններ նախագծերը, որոնք հնարավորություն են տվել ամփոփել տարվա ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքները և նախանշել հետագա զարգացման ուղղությունները:

Ուսումնական տարվա ընթացքում սովորողներին տրամադրվել են նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ: Ընդհանուր առմամբ ծառայություններ տրամադրվել են 8 մասնագետի կողմից, շուրջ 130 սովորողի:

Այնուամենայնիվ սովորողները չեն ստացել իրենց համար սահմանված ծառայությունների ամբողջ ծավալը, ինչը պայմանավորված է մասնագետների և սովորողների թվի անհամաչափությամբ:

Նշված հանգամանքից ելնելով՝ կիրառվել է իրավիճակային լուծում, համաձայն որի յուրաքանչյուր սովորողի համար ապահովվել է առնվազն մեկ մասնագիտական ծառայություն: Ծառայության ընտրությունն իրականացվել է երեխայի անհատական կարիքների և զարգացման առաջնահերթությունների գնահատման հիման վրա՝ նպատակ ունենալով առավել նպատակային և արդյունավետ դարձնել աջակցությունը:

Ընդհանուր առմամբ, իրականացված մոտեցումը հնարավորություն է տվել ապահովել ծառայությունների նվազագույն հասանելիություն բոլոր շահառուների համար՝ միաժամանակ ընդգծելով մասնագիտական ռեսուրսների ընդլայնման և ծառայությունների առավել ամբողջական կազմակերպման անհրաժեշտությունը:

Հուլիս ամսվա առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել են ուսումնական տարվա ավարտական գործընթացների կազմակերպման և ամփոփման աշխատանքները: Կազմակերպվել են վերաքննությունները, մշակվել և նախապատրաստվել են անհրաժեշտ թեստերը, ինչպես նաև իրականացվել են քննությունների կազմակերպման հետ կապված բոլոր անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները:

Վերաքննության ենթակա էր մեկ սովորող, որը սահմանված ժամկետում չի ներկայացել քննությանը: Տվյալ փաստն արձանագրելու և հետագա ընթացակարգային հարցերը քննարկելու նպատակով հրավիրվել և անցկացվել է արտահերթ մանկավարժական խորհրդի նիստ:

Ամփոփվել և համակարգվել են իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների նախագծերը, արձանագրությունները և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ ապահովելով ուսումնական տարվա փաստաթղթաշրջանառության ամբողջականությունը:

Նշված աշխատանքների ավարտից հետո մանկավարժական անձնակազմը սահմանված կարգով անցել է արձակուրդի:

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են նախորդ ուսումնական տարվա վերջնական ամփոփման և նոր ուսումնական տարվա նախապատրաստման աշխատանքներ:

Առաջին հերթին կազմակերպվել է 2025-2026 ուսումնական տարվա ավարտական գործընթացների վերջին փուլը: Կազմակերպվել է վերաքննություն՝ չորրորդ դասարանի վերաքննության ենթակա մեկ սովորողի համար ևս մեկ հնարավորություն ապահովելու նպատակով: Սակայն նշանակված օրը սովորողը կրկին չի ներկայացել վերաքննությանը: Սովորողի չներկայանալու և հետագա փոխադրման վերաբերյալ հարցը քննարկվել է մանկավարժական խորհրդի հերթական նիստում: Արդյունքում՝ դպրոցում սովորող բոլոր երեխաները, բացառությամբ նշված չորրորդ դասարանի սովորողի, փոխադրվել են հաջորդ դասարան:

Նույն մանկավարժական խորհրդի նիստում ամփոփվել են 2025-2026 ուսումնական տարվա արդյունքները: Քննարկվել և հաստատվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը, տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների, դասղեկների, դաստիարակների և մյուս մանկավարժական աշխատողների տարեկան հաշվետվությունները, որոնք քննարկվել և հավանության են արժանացել:

Նախորդ ուսումնական տարվա աշխատանքների ամբողջական ամփոփումից հետո մեկնարկել են 2026-2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները: Մշակվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներդպրոցական վերահսկողության տարեկան պլանների նախագծերը, քննարկվել են նոր ուսումնական տարվա հիմնական աշխատանքային ուղղություններն ու կազմակերպչական առաջնահերթությունները:

Իրականացվել են նաև նոր ուսումնական տարվա մեկնարկային կազմակերպչական աշխատանքները: Քննարկվել են ուսումնական պլանի, դասաբաշխման, դասարանների ձևավորման և կազմակերպման հետ կապված հարցերը, տրվել են ընթացիկ հանձնարարություններ, իրականացվել են աշխատանքների նախնական պլանավորումն ու համակարգումը՝ ուսումնական գործընթացի սեպտեմբերի 1-ի պատշաճ մեկնարկն ապահովելու նպատակով:

Օգոստոսին շարունակվել է նաև սովորողների ընդունելության գործընթացը. իրականացվել են դիմումների ընդունման, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և նոր ընդունվող սովորողների ուսումնառության կազմակերպման նախապատրաստական աշխատանքները:

Միաժամանակ իրականացվել են սեպտեմբերի 1-ի միջոցառման նախապատրաստական աշխատանքները՝ միջոցառման բովանդակության, մասնակիցների և կազմակերպչական ընթացքի նախնական համակարգմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված ուսումնական-դաստիարակչական աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնական հաստատությունում ապահովվել է գործընթացների ընդհանուր կազմակերպված և համակարգված

ընթացք՝ ընդգրկելով ուսումնական աշխատանքի պլանավորում, իրականացում, մշտադիտարկում և ամփոփում:

Տարվա ընթացքում իրականացված աշխատանքները միտված են եղել ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը, սովորողների ուսումնական առաջընթացի գնահատման և վերլուծության համակարգի կատարելագործմանը, ինչպես նաև մանկավարժական և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը: Արձանագրվել է համագործակցային աշխատանքի ընդլայնում տարբեր մասնագիտական խմբերի միջև՝ ներառյալ ուսուցիչներ, դաստիարակներ, մասնախմբերի ղեկավարներ, վարչական անձնակազմ և աջակցող ծառայություններ տրամադրող մասնագետներ:

Վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ մի շարք ուղղություններով արձանագրվել են դրական զարգացումներ՝ մասնավորապես դասավանդման մեթոդների կիրառման, սովորողների ներգրավվածության ապահովման, միջոցառումների բազմազանության և կրթական միջավայրի հարստացման առումով: Միաժամանակ բացահայտվել են նաև համակարգային բնույթի մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են պլանավորման և հաշվետվականության համադրելիությանը, դասի նպատակների և վերջնարդյունքների հստակ ձևակերպմանը, ինչպես նաև որոշ դեպքերում գնահատման մոտեցումների միասնականացման անհրաժեշտությանը:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործընթացը ապահովել է սովորողների նվազագույն անհրաժեշտ աջակցությունը, սակայն ընդգծվել է նաև ռեսուրսային սահմանափակումների ազդեցությունը ծառայությունների լիարժեք ծավալով մատուցման վրա: Այս համատեքստում կարևորվել է ծառայությունների առավել նպատակային բաշխման և առաջնահերթությունների վրա հիմնված անհատական մոտեցումների կիրառումը:

Ընդհանուր առմամբ, իրականացված աշխատանքները վկայում են ուսումնական հաստատության զարգացման շարունակական գործընթացի մասին՝ միտված կառավարման արդյունավետության բարձրացմանը, ներառական կրթության սկզբունքների ամրապնդմանը և ուսումնական գործընթացի որակի կայուն զարգացման ապահովմանը:

Արձանագրված խնդիրները հիմք են հանդիսանում հաջորդ փուլում պլանավորելու համակարգային բարելավումներ՝ ուղղված պլանավորման և հաշվետվողականության միասնականացմանը, մանկավարժական մոտեցումների համադրելիության բարձրացմանը և մասնագիտական աջակցության ծառայությունների կազմակերպման արդյունավետության ավելացմանը:

«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող
երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝ Ա.Գարեգինյան

26.08.2026